

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՍՈՒՄՆԱՀԱՐՄԱՆԵԿԱՆ
ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

Հովհ. Թումանյանի մի շարք ստեղծագործություններ վկայում են այն մասին, որ նա հայոց մշակույթի շատ բնագավառներ ոչ այնքան «նկարագրում է փորձված ազգագրագետի հմտությամբ»,¹ որքան որ մշակույթի տարբեր բնագավառներին վերաբերող ազգագրական նյութը հաղորդում է որպես հմուտ ու տաղանդավոր բանասաց: Իսկ երբ այդ նյութը ներկայացվում է հանճարեղ արվեստագետի գրչով, կերտվում են այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Մարոն», «Անուշը», «Լոռեցի Սաքոն», որոնք, գեղարվեստական արժեքից զատ, անսպառ աղբյուր են նաև հայոց ավանդական մշակույթի ուսումնասիրության համար: Ազգագրագետի համար Թումանյանը հանդես է գալիս որպես վստահելի բանասաց, որովհետև նա նկարագրում է իր ու իր շրջապատի՝ ընտանիքի, ընկերների, համագյուղացիների կյանքը, այն մշակութային իրողությունները, որոնց կրողն է ինքը: Որոշ բաներ նրան պատմել են, բայց հիմնականում նա տեսել ու ապրել է այն, ինչի մասին գրում է, ակնառեսուն ու ունկնդիրն է այն ամենի, ինչի մասին կարդում ենք նրա ստեղծագործություններում: Թումանյանը նկարագրվող միջավայրի, բարքերի ու սովորույթների, մշակութային այս կամ այն երևույթի անմիջական կրողն է, մասնակիցն ու դերակատարը:

Հայոց ավանդական ամուսնահարսանեկան արարողակարգի գեղարվեստական փայլուն պատկեր է «Մարոն» պոեմը: Պոեմում ազգագրական նյութը մատուցված է տաղանդավոր արվեստագետի գրչով: Ընթերցողի աչքի առջև կարծես ամուսնական ողջ արարողակարգի տեսաժայթակ են՝ իր հստակ կանոնակարգված փուլերով: Հեղինակի հակիրճ, կտրուկ, բայց և խոսուն մախադասություններն օժտված են այնպիսի ուժով, որ կարծես հուշում են ընթերցողին՝ ավարտվեց նախորդ փուլը, սկսվում է նորը.

Նշանեցին Մարոյին

Տվին չորան Կարոյին:

Եվ մինչ ընթերցողը խորասուզվում է հերթական փուլի արարողությունների նկարագրության մեջ, գրողը կրկին սթափեցնում է նրան՝ ևս մի փուլ ավարտվեց.

Պսակեցին Մարոյին

Տվին չորան Կարոյին:

Մարոն հեղինակի հասակակիցն է, նրա խաղընկերը: Լսելով Մարոյի մահվան լուրը Թումանյանի մանուկ հոգին ապրել է հայոց նահապետական գյուղական մշակույթին բնորոշ «վաղաժամ ամուսնության դժբախտ հետևանքների»² ողբերգությունը: Տպավորվող հոգին հետագայում պետք է ներկայացներ ընկերուհու դժբախտ ճակատագիրը և ակամա հանդես գար որպես բանասաց այն երևույթի, որ լոռեցիներն էլ, «մյուս հայաբնակ գավառների նման...սրանից մի երկու տասնյակ տարի առաջ ավելի փոքր հասակում էին ամուսնացնում իրենց զավակներին, բավական էր, որ աղջիկը 9-10, իսկ տղան՝ 12-13 տարեկան դառնար, որ նրանց «հոգատար» ծնողները՝ առանց մույնիսկ նրանց համաձայնությունն առնելու՝ նշանեին ու պսակեին նրանց»:³

Ժիր էր Մարոն, դուրեկան,

Նոր էր իննը տարեկան,

Նրանց տունը երբ մի օր

Եկան երկու եկավոր:

Մարոյի և նրա նմանների ճակատագրի ազգագրագետ վկա Ե. Լալայանը գրում է. «Այժմ ևս այս տխուր երևույթը (վաղաժամ ամուսնությունը-Հ.Հ.) շարունակվում

¹Կ. Մեյլիք - Փ ա շ ա ն ն, Թումանյանը և ազգագրությունը, Պատմա-բանասիրական հանդես, 3, 1969, էջ 78:

²Նույնը:

³Ե. Լ ա շ ա ն ն, Բորչալուի գավառ, Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), Թիֆլիս, 1902, գիրք 9, էջ 212:

է»:⁴ Նա գրանցում է, որ ամուսնացողների տարիքային տարբերությունը 5-15 տարի էր հոգուտ տղամարդկանց:⁵ Թեև Թումանյանը չի նշում Կարոյի տարիքը, բայց հեղինակի արտահայտիչ խոսքից ակնհայտ է, որ Կարոն բավականին մեծ էր Մարոյից.

Չորան Կարոն սարերի
Մի հովիվ էր վիթխարի,
Բոյ-բուսաթին նայելիս
Մարդու սարսափ էր գալիս:

Հայոց նահապետական գյուղի «աղջիկ ուզելու» գեղարվեստական հոյակապ պատկեր է Մարոյին ուզելու տեսարանը: Ի տարբերություն սովորական բանասացների՝ ի ծնե օժտված լինելով նաև ազգագրագետի նրբազգացությամբ, որևէ մշակութային երևույթ նկարագրելիս Թումանյանն ընտրում է այդ երևույթի ամենախորհրդանշական պահը այդ պահին ասվող բառային բանաձևերից և արտահայտություններից ամենաբնութագրականը: «Մարոյի» ազգագրական արժեքներից մեկն այն է, որ Թումանյանը զգում է, որ նշանդրեքի կամ «աղջիկ ուզելու» «մեխը» ազգագրական տեսանկյունից հենց երկու կողմերի բանակցությունն է: Գրողը ներկա չի եղել Մարոյի նշանադրությամբ, սակայն, լինելով Լռուկա մշակույթի գիտակ և կրող, կասկած չի ունեցել, թե ինչպես պետք է լռեցի «երկու եկավորներն» արտահայտելին իրենց մտադրությունը.

Շնորհակալ ենք մենք՝ ասին,
Տաշտերդ լի հաց լինի,
Դուռներդ միշտ բաց լինի,
Հաց չենք ուզում ձեզանից,
Հող տվեք մեզ ձեր տանից:

Այս տողերով անուղղակիորեն նաև հավաստվում են Լալայանի գրառումներն այն մասին, որ լռեցի խնամախոսները սովորաբար իրենց մտադրությունն արտահայտում էին հետևյալ կերպ. «Էկել եմ քո օջախից մի բուռը հող տանելու»:⁶ Նա վկայում է, որ աղջկա ձեռքը խնդրում էին գերդաստանի մեծից՝ պապից, մեծ հորեղբորից կամ հորից:⁷ Նույն կերպ և Թումանյանի մոտ աղջկա հայրն է տալիս համաձայնությունը.

Էն ժամանակ Մարոյի
Հայրիկն առավ արաղի
Լիքը բաժակն ու սասաց.
-Կամքդ լինի, տեր աստված...

Սակայն դժվար թե Մարոյի հայրն այդքան արագ համաձայնություն տար. բանն այն է, որ այդպես ընդունված չէր հայ իրականության մեջ, և միանգամից համաձայնվելը ամոք էր համարվում նույնիսկ այն դեպքում, երբ «աղջկա ծնողները աղքատ լինելով, աշխատում են կարելվույն չափ շուտ ազատվել մի «ուտող բերանից»:⁸ Այս առիթով Ե. Լալայանը նկատում է, որ «աղջկա տերը որքան էլ տրամադիր լինի նրանց խնդիրը կատարելու, այնուամենայնիվ, իսկույն ևեթ խոսք չի տալիս»:⁹ Թումանյանը, պարզապես բանաստեղծական շահերից ելնելով, միտումնավոր կրճատել է բանակցությունների ընթացքի նկարագրությունը:

Նշանդրեքից մինչև հարսանիք ընկած ժամանակաշրջանը նույնպես հակիրճ, բայց խոստում է պատկերված Թումանյանի կողմից: Ազգագրագետի նրբազգացությամբ օժտված հմուտ և փորձված բանաստեղծը չի շրջանցում փեսա-գոքանչ հարարերությունները.

Բայց գոքանչը անսահման
Միրում, փարում էր նրան:

Հայտնի է, որ հայ իրականության մեջ գոքանչը կարևոր դեր էր խաղում նշանվածների կյանքում մինչև հարսանիք ընկած ժամանակահատվածում: Այսպես, հայ սովորութային իրավունքի մասնագետ Խ. Սամուելյանը նկատում է. «Ամենուրեք հայ

⁴ Ե. Լալայան, *նշվ. աշխ.*, էջ 213:

⁵ Նույնը:

⁶ Նույն տեղում, էջ 216:

⁷ Նույնը:

⁸ Նույն տեղում, էջ 212:

⁹ Նույն տեղում, էջ 216:

ժողովրդի մեջ սովորություն կա, որ փեսացուն նշանադրությունից հետո պարտավոր է ծածուկ և անտեսանելի կերպով թե՛ աներոջ կողմից և թե՛ թաղի երիտասարդների աչքերից հաճախել միշտ յուր նշանածին, ընդամին նա միշտ գնում է ընծաներով և, որ գլխավորն է, ընդունվում է միշտ աղջկա մոր կողմից և հյուրասիրվում»:¹⁰ Հայոց մեջ նման դեպքերում այդ ընծաների գերակշիռ մասը կազմում էին քաղցրավենիքն ու անուշեղենները, թարմ ու չոր մրգերը, որի մասին ևս Թումանյանը հիշատակում է.

Շատ էր սիրում և Մարուն.

-Լավն է, ասում էր Կարոն,

Բերում է ինձ ամեն օր

Կանփետ, չամիչ ու խնձոր...

Փեսա-գոքանչ հարաբերություններից Թումանյանն անուղղակիորեն անդրադառնում է նաև «Լոռեցի Մարուն» պեմունմ: Ընդ որում, որպես հմուտ բանասաց, նա ակնարկում է այդ հարաբերություններից հատուկ ազգագրական մի երևույթ.

Ուզեց գոքանչի ձվածե՞ղ ուտել,

Թե՞ նշանածին շատ էր կարտուել-

Ոչխարը թողել՝ գնացել էր տուն:

Ընդամենը մի քանի բնութագրական բառերի գործածմամբ՝ գուռնա, հինա և այլն, Թումանյանը վերստեղծում է հայոց ավանդական հարսանիքի մի հավաքական պատկեր: Այսպես, նշվում է՝

Մին էլ Կարոն աղմուկով

Եկավ գուռնով-թմբուկով:

Ընդհանրապես անկարելի է պատկերացնել հայոց հարսանիքն առանց գուռնայի, առանց գյուղի երեխաների ու մեծահասակների աղմկոտ պարի:¹¹ Հեղինակն այնուհետև շարունակում է.

Ու Մարոյին գուզեցին,

Երեսին քող ձգեցին,

Հինա դրին ձեռքերը...

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Թումանյանը հարսանիքի պարզունակ նկարագրություն է տվել, սակայն դա բնավ այդպես չէ:

Հարսի զգեստի կարևորագույն բաղադրիչներից է քողը: Քող կրելը նաև հայոց ներգերդաստանային-ներընտանեկան հարաբերությունների վիճակի կարևորագույն ցուցիչներից է: Հարսանեկան քողի խորհրդանշական դերը վկայող օրինակներ հանդիպում ենք հայոց տարբեր ազգագրաբաններից նվիրված գրականությունում:¹² Ինչպես վերը վկայում են ազգագրական նյութերը, հինա դնելու սովորույթը հայոց հարսանեկան արարողակարգի անքակտելի մասն էր, տարբեր ազգագրաբաններում այն հայտնի էր հինա տանել, հինատանեք, հինադրեք, հինադրես և այլ անուններով:¹³ Լոռիում, օրինակ, «Հանդերձը և հինան, որ վերցրած է լինում մակարների հետ եկող հասակավոր կինը, փոխառափոխ դնում են պար եկող երիտասարդների ու աղջիկների գլխերին և պար ածում, ապա հանդերձը հանձնում են հարսնացուի մորը, իսկ հինան մի աղջկա, որ կրակի վրա դնե և հսկե վերան, մինչև որ բերող կինը, որպես սկեսրոջ կողմից լիազոր անձն, կներկե նախ հարսնացուի և ապա ընկերուհիների ձեռքերը»: Հինա դնելու արարողությունը հավանաբար այնքան խորհրդանշական էր, որ նույնիսկ հարսանեկան երգերում հիշատակվում է այդ մասին: Հարսին հագցնելիս ընկերուհիները երգում էին. «Քուրիկներ խափեցին մի ձեռքն հինով», «Չբուրիկ խափեցին մատիկ մի հինով...»:¹⁴

Թումանյանը կարճ, բայց բովանդակալից ձևակերպումներով ներկայացնում է նաև պսակի արարողության բնութագրական տարրերը, այդ թվում նաև դրա ընթաց-

¹⁰ Խ. Ս ա մ ու ե լ յ ա ն, Մայրական իրավունքը (տեսություն հայ սովորույթական իրավունքից), ԱՀ, գիրք 19, Թիֆլիս, 1910, էջ 49:

¹¹ Հմմտ. «Այդ հանդիսավոր գնացքին... առաջնորդում է դավուլ-գուռնան»- Ե. Լալայան, Բողջալուի գավառ, էջ 233:

¹² Վ. Պ ե տ ո յ ա ն, Մասնա ազգագրությունը, Եր., 1965:

¹³ Ե. Լ ա լ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 230 - 231:

¹⁴ Ե. Լ ա լ ա յ ա ն, Երկեր, հ.1, Եր., 1985, էջ 154: Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 245:

քում իրականացվող երկխոսությունը, որի ժամանակ հայ աղջիկը «խոսում է» լռությամբ՝ գլուխը հեզորեն ու խոնարհ կախելով.

-Տե՞ր ես, որո՞յա՛կ, հարցրեց:
-Տեր եմ, ասավ մեր Կարոն,
Լուռ կանգնած էր միշտ Սարոն...

Այս ձևակերպումները գրեթե նույնությամբ հիշատակվում են նաև ազգագրական գրականության մեջ:¹⁵ Թումանյանի տողերն այնքան խոսում են, որ ոչ ազգագրագետ ընթերցողն էլ անմիջապես հասկանում է, որ հարսանեկան արարողակարգի յուրաքանչյուր պահ խորհրդանշական է, որ որոշակի պահի հնչում է որոշակի երաժշտություն, և «տարան հա»-ն չի կարող հնչել մեկ այլ, եթե ոչ աղջկան հոր տանից հանելու պահին.

Իսկ երբ հնչեց «տարան հա»-ն,
Նրան փեսի տուն տարան:

Նշենք, որ նմանատիպ նյութ գրանցված է նաև Ե. Լալայանի կողմից. այսպես՝ «Այդ ժամանակ զուռնեն դռանն սկսում է նվազել «Տարան հայ» կամ «Էր հեռանաս» եղանակը, հարսը հեկեկալով, լալով, երկու կանանց առաջնորդությամբ գալիս կանգնում է օջախի մոտ, թագավորը մոտենում է նրան և մոտը կանգնում: Ապա հարսի հայրը լալով խրատում և օրհնում է նրան... ասպա դառնալով փեսին՝ քեզ էլ եմ օրհնում, բալա ջան... կալիդ քամի ըլի, ջաղացիդ հերք ըլի...» կամ «Հարսի հերը փեսին օրհնելիս ասում էր՝ «կալիդ քամի ըլի, ջաղացիդ հերք ըլի/Թ՛և ու թիկունքիդ ամուր բերդ ըլի»:¹⁶

Ամուսնահարսանեկան արարողակարգը ներկայացնելիս Թումանյանը նաև հաղորդում է ժողովրդական բանահյուսության փայլուն նմուշներ (կոնկրետ դեպքում՝ հարսանեկան օրհնանք)՝

Հայրն էլ եկավ ու ծեսին
Էսպես օրհնեց իր փեսին.
Ջաղացիդ միշտ հերք լինի,
Սեջքդ ամուր բերդ լինի... («Մարոն»)

Հարսանիքի փայլուն պատկեր է կերտված նաև «Անուշ» պոեմում, որն անգուգական նյութ է ոչ միայն մեր կողմից դիտարկվող հարսանեկան արարողակարգի, այլև հայոց ավանդական կենցաղի, հայոց սովորույթային իրավունքի վերաբերյալ: Թումանյանի «Անուշը» կարդալով նաև բացահայտում ենք, որ հայոց ավանդական հարսանիքը համազրույական միջոցառում, տոնախմբություն է, որի մասնակիցը ողջ գյուղն էր.

Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք,
Հրճվում էր անգուսպ ամբոխը գյուղի:

Հարսանիքը հատկապես տոն էր «հասած» աղջիկների ու տղաների համար, քանի որ դա միմյանց հավանելու, ընտրություն կատարելու ամենահարմար առիթն էր:

Գյուղ էին իջել հովիվ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:

Հենց հարսանիքի ժամանակ էին երիտասարդ տղաներն ամեն ջանք գործադրում ցուցադրելու իրենց ֆիզիկական ունակությունները՝ ճարպկությունը, ուժն ու քաջությունը: Այդ նպատակին էին ծառայում հարսանիքների ժամանակ կազմակերպվող խաղերն ու զանազան միջոցառումները: Եվ զուցե հարսանիքի ամենահետաքրքիր դրվագները՝ գոտեմարտը, նետաձգությունը, ջիլիթ (ջիրիթ) խաղալը¹⁷ կազմակերպվում էին հենց այդ նպատակով: Գոտեմարտի ժամանակ հնչում էր հատուկ երաժշտություն՝ կոխի եղանակ. «Չուռնաչին պարի եղանակը փոխում էր, փչում էր կոխի եղանակ»:¹⁸

Ահել ու ջահել իրարով անցան.
Հարայ են տալի- «Քաշի հա, քաշի...
Ու դուրս քաշեցին զոռով երկուսին:

¹⁵ Վ. Պ ե տ ո յ ա ն, *Նշվ. աշխ.*, էջ 263: Վ. Ղազարյան, *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության և բանահյուսության արխիվ (այսուհետև՝ ՀԱԻ ԱԲԱ)*, ֆ. 89:

¹⁶ Ե. Լ ա յ ա յ ա ն, *Բորչալուի գավառ*, էջ 239:

¹⁷ Վ. Բ ո ղ ա ն, *Հայ ժողովրդական խաղեր*, հ. 1-3, Եր. 1963-1983:

¹⁸ Վ. Ղ ա զ ա թ յ ա ն, *ՀԱԻ ԱԲԱ*, ֆ. 89:

Ողջ գյուղը բաժանվում էր երկու բանակի, որոնցից յուրաքանչյուրը բարձրաձայն բացականչություններով, աննկարագրելի եռանդով ոգևորում ու ոգեշնչում էր մենամարտողներից մեկնումենկին.

Ամեն մի բանակն ընտրեց փահիլան,
Կանգնեց թիկունքին տղերանց մեկի,
Գոռում են, գոչում երկու բանակից.

-Սրտապի՛նդ կացեք, մի՛ վախեք տղերք...

Տղաներն ավելի էին ոգևորվում, երբ նկատում էին հարսի թիկունքում թաքնված, իրենց մրցակցությանն ուշի ուշով հետևող աղջիկներին, ովքեր գաղտագողի նայում էին մենամարտողներին, հիանում նրանցով և մեծ դժվարությամբ ընտրություն կատարում, քանի որ հարսանեկան խաղերում ոչ ոք չէր պարտվում, բոլոր երիտասարդները հաղթում էին. չէ՞ որ դա կազմակերպվում էր աղջիկների «խելքն առնելու»¹⁹ համար: Եվ աղջիկները թերևս տեղյակ, որ

Ադաթ կա սակայն էն մութ ձորերում,
Ու միշտ հնազանդ հնոց աղաթին,
Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին,

կամ գուցե մտավախություն ունենալով բացառություններից, սրտի թրթիռով հետևում էին մրցակցությանը, թե հանկարծ իրենց սիրելին չապարտվի.

Անուշը կանգնած... Սարոն նկատեց,
Թունդ առավ սիրտը ու զարկեց արագ
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ արավ Սարոն, ծնկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վրեն:

«Անուշ» պոեմում Թումանյանը վկայում է նաև հարսանեկան ձիարշավի մասին, որի վերաբերյալ ևս բազմաթիվ ազգագրական վկայություններ կան:²⁰

Տեսեք, տեսեք, դափ ու զուռնով
Ինչ հարսնիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ, թոն ու ձյունով
Չի են խաղում, չափ տալի...

Թումանյանն արժեքավոր նյութ է հաղորդում նաև հայ իրականության մեջ գոյություն ունեցող առևանգմամբ ամուսնության մասին, որը կարող էր և ողբերգական ավարտ ունենալ:

...Էլ չեմ դիմանալ, կփախցնեմ գոռով,
...Ընու հերն ու մերը թե որ ինձ չտան,
Արին կթափեմ ես գետի նման.
Սարերը կընկնեմ, կորչեմ անգյուման:

Լալայանը ևս հաստատում է Լռովա հայոց մեջ գոյություն ունեցող այս վաղեմի սովորության մասին. Երբ գլխավորապես աղջկա ծնողները համաձայն չեն լինում տալու իրենց աղջիկը նրա վրա սիրահարված երիտասարդին... և սա, հավաքելով յուր ընկերներին, փախցնում է աղջկան: Երբ այս մասին լսում են աղջկա ծնողները, ձիավորվում, սար ու ձոր ընկնում, որոնում են և եթե գտնում են՝ սաստիկ կռվում են, աղջիկը հետ առնում տանում տուն, իսկ եթե ոչ, տղան մի քանի օր աղջկան յայլաներում կամ բարեկամի մոտ պահելուց հետո ուղարկում է հոր տունը»:²¹ Թումանյանը «Անուշ»-ում տալիս է նաև այս սովորության գեղարվեստական փայլուն նկարագրությունը.

Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Սարեր ու ձորեր ոտնատակ տվեց՝
Չորան Սարոյին գտնելու համար,
Որ սարիցն իջավ, Անուշին փախցրեց:
Մի ամսից հետո տղերքն եկան տուն,

¹⁹ Վ. Պ ե տ ո յ ա ն, *Նշվ. աշխ.*, էջ 233:

²⁰ Վ. Բ դ ո յ ա ն, *Հայ ժողովրդական խաղեր*, հ. 2, էջ 198: Ե. Լալայան, *Ջավախք, Երկեր*, հ. 1, Եր., 1985, էջ 250: Վ. Պետոյան, *Նշվ. աշխ.*, էջ 256:

²¹ Ե. Լ ա լ ա յ ա ն, *Բորչալուի գավառ*, էջ 215: Վ. Ղազարյան, *ՀՄԻ ԱԲԱ*, ֆ. 89, էջ 317:

Գովելով նրա արարքը ճարպիկ,
 -Հալալ է տղին, այ իզիթություն,
 Ահա թե ինչպես կփախցնեն աղջիկ:

Իհարկե, Անուշո սովորական դեպք չէ. Մոսին վրեժ է լուծում ոչ միայն քրոջ առևանգման, այլ նաև իր պատիվը ընկերոջ կողմից ոտնահարելու համար:

Մենակ Անուշի ախպերը - Մոսին
 Մնաց հանդերում. երդում կերավ նա,
 Ուր որ էլ լինին՝ նրանց միասին
 Գտնի՝ կոտորի սիրտը հովանա:

Անշուշտ, նման իրավիճակում կարևոր հաշտարար դեր էր խաղում նաև գյուղի քահանան, ինչի մասին վկայում է Թումանյանը, ցույց տալով, թե որ դեպքում էր ներկում առևանգումը և իրականացվում պասկը, ինչը (դա բացահայտ զգում ենք Թումանյանի տողերից) կարևորն էր տվյալ պարագայում.

Մի լար, իմ աղջիկ, ինձ խոստովանիր,
 Միրում ես նրան, քու կամքով փախար...
 Եթե սիրում ես՝ էլ դարդ մի անիր,
 Պիտի պասկեմ ես ձեզ անպատճառ...

Վ. Ղազարյանը վկայում է. «Պատահում էր, որ գոռով փախցրած աղջկան թողնում էին տղի տանը, գիտենալով, որ հետ բերելը կրկնակի ամոթանք է իրենց համար, աղջիկը մնալու է տանը»:²²

...Կանգնած են շուրջը կանայք հարևան,
 Ու խոսք չեն գտնում ասեն անարգված,
 Տարած, ետ բերած, անբախտ աղջկան:

Նույնիսկ հեքիաթներում և լեգենդներում Թումանյանը հաղորդում է հարսանեկան արարողակարգին վերաբերող նյութեր: Հասարակ ժողովրդի տղաներն ու աղջիկներն իրար ծանոթանում էին ջրի ճամփին, հարսանիքներում, սարերում կամ սարի ճամփին, տոնական օրերին ուխտավայրերում:²³ «Ախթամար» լեգենդում Թումանյանն անդրադառնում է սիրահարների հանդիպման մեկ այլ տարբերակի, ընդ որում, թեև թվում է, թե նա դրական է վերաբերվում նման հանդիպումներին, բայց գեղարվեստական խոսքով արտահայտում է ժողովրդի վերաբերմունքը նման կապի վերաբերյալ.

Ու աստղերը կամարից
 Ակնարկելով բամբասում են
 Լիրք, անամոթ Թամարից»:

Այլ օրինակներում, ինչ-ինչ պատճառներից ելնելով, ծնողներն իրենք էին որոշում խնամիներ դառնալ («Ոսկու կարասը»), կամ արքաներն իրենց աղջիկներին ամուսնացնելու նպատակով դեսպաններ էին ուղարկում արժանավոր փեսացուների մոտ, իսկ վերջիններս էլ արքայադատեր սրտին արժանանալու համար անպայման որոշակի փորձության էին ենթարկվում՝ ցույց տալով իրենց շնորհքը ճիարշավում, գոտեմարտում և այլն: Հեքիաթային հարսանիքները ևս չեն կարող իրականանալ առանց քավորի, բաժինքի, խնամիների փոխադարձ հարաբերությունների, յոթ օր յոթ գիշեր ընթացող քեֆերի («Չախ-չախ թագավորը», «Ոսկու կարասը», «Կռնատ աղջիկը»): Եվ բացառված չէ, որ արքայազնն ամուսնանա ոչ արքայական ծագում ունեցող, նույնիսկ հաշմանդամ աղջկա հետ, որովհետև թումանյանական իմաստությունն ամուսնության մասին ասում է. «Մարդ ու կնկա բախտը որ կա՝ սրտիցն է: Աստված դրանց համար էլ եղպես է բարի տեսել»: («Կռնատ աղջիկը»)

Ամենայն հավանականությամբ, Թումանյանը տեղյակ է նաև հնում եղած այն սովորությանը, երբ աղջիկներն էին փեսացու ընտրում²⁴ և ոչ թե տղաները, սպա թե ոչ թեկուզ հեքիաթում նա այնքան «անհամեստ» չէր ներկայացնի հայ աղջկան.

«Աստված ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակ էլ տխուր չես լինիլ, ուրախ ու երջանիկ կլինես:

²² Վ. Ղազարյան, *նշվ. աշխ.*, էջ 317:

²³ Նույն տեղում, էջ 345:

²⁴ Խ. Սամուելյան, *նշվ. աշխ.*, էջ 37:

-Դե որ այդպես է, արի դու եղիր իմ կյանքի մտերիմ ընկերը,- թախանձեց աղջիկը ճամփորդին»:(«Անխելք մարդը»)

Թումանյանական ամուսնահարսանեկան արարողակարգում ևս խնձորը հանդես է գալիս որպես սիրո խորհրդանիշ՝ լրացնելով ազգագրական գրականության մեջ ափոված բազմաթիվ նմանատիպ նյութերը.²⁵

Ընտրիր, գարկիր ձեռիդ խնձորն

Անհաղթներից անհաղթին,

Որ ողջ աշխարհ մայիլ մնա

Անզուգական քո բախտին: («Փարվանա»)

Այսպիսով, ծնված լինելով Լոռվա ավանդական կենցաղամշակութային արժեքներով ապրող Դսեղ գյուղում, Հովի. Թումանյանը նուրբ դիտողականությամբ և իրեն հատուկ խորաքափանցությամբ վավերացրել է ժողովրդական կյանքի առօրյա և տոնածիսական կացութաձևը, այդ թվում նաև՝ հայոց ավանդական ամուսնահարսանեկան արարողակարգի որոշ մանրամասներ՝ հաղորդելով դրանց գունեղ, գեղարվեստական մարմնավորում, անաղարտ պահպանելով ազգագրական ատաղձը:

Ցավոք, Թումանյանը չի տալիս ամուսնահարսանեկան ծիսաշարի հանգամանալից բնութագիրը (նրանից դա չենք էլ կարող պահանջել կամ ակնկալել): Նրա ստեղծագործությունները սահմանափակվում են այդ ծիսաշարի որոշ պահերի նկարագրությամբ, այդ ծիսաշարի հետ կապված շատ մանրամասներ Թումանյանը բավարար չափով չի լուսարանում, որոշ սովորությունների մասին նրա ստեղծագործություններում չենք գտնում նույնիսկ պարզ հիշատակություն: Այնուամենայնիվ ինչպես տեսանք, Թումանյանի մի շարք ստեղծագործություններ արժանի են ազգագրագետների ուշադրությանը՝ հատկապես հայոց ավանդական ամուսնահարսանեկան արարողակարգի մի շարք նրբություններ բացահայտելու առումով:

ПРОЯВЛЕНИЯ ТРАДИЦИОННОЙ АРМЯНСКОЙ СВАДЕБНОЙ ОБРЯДНОСТИ В ПРОИЗВЕДЕНИЯХ ОВ. ТУМАНЯНА

___ Резюме ___

___ А. Арутюнян ___

В статье обсуждается проблема проявлений элементов традиционной армянской свадебной обрядности в произведениях выдающегося армянского поэта Ованеса Туманяна. Некоторые произведения поэта анализируются не с точки зрения их художественной ценности, а как этнографический первоисточник по многим сферам армянской свадебной обрядности. Сам поэт рассматривается как прекрасный знаток традиционной армянской культуры, нравов, быта и атмосферы армянского села конца XIX-начала XX века.

²⁵ Ե. Լ ա լ ա յ ա ն, Վայոց Շիր, էջ 144: